ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարությունը 2019 թվականին կազմակերպում է Համահայկական IX մանկապատանեկան նկարչական մրցույթ-փառատոնը՝ «Իմ Սարյանը» խորագրով: Այն նվիրված է XX-րդ դարի մեծագույն նկարիչներից մեկին, հայ նկարչության արդի դպրոցի հիմնադիր Մարտիրոս Սարյանին:

Մրցույթ-փառատոնն անցկացվում է կերպարվեստի բոլոր ճյուղերի (գրաֆիկա, գեղանկարչություն, քանդակ, խեցեգործություն, դեկորատիվ կիրառական արվեստ և այլն) շրջանակներում: Աշխատանքները կարող են ներկայացված լինել ցանկացած նյութով (ջրաներկ, գուաշ, ակրիլ, ածուխ, պաստել, կավ, տեքստիլ, մետաղ, փայտ և այլն):

Մրցույթ-փառատոնին կարող են մասնակցել սփյուռքի բոլոր տիպի կրթօջախների, խմբակների, մշակութային կենտրոնների, Հայաստանի ու Արցախի հանրակրթական ու արվեստի դպրոցների, նկարչական խմբակների, ինչպես նաև մասնագիտական քոլեջների 6-18 տարեկան սաներ:

Մրցույթ-փառատոնն անցկացվելու է երկու փուլով: Առաջին փուլում հաղթողների աշխատանքները ներկայացվելու են ցուցահանդեսում և տպագրվելու են համապատասխան պատկերագրքում: Ցուցահանդեսին մասնակցած աշխատանքների հեղինակներից որոշվելու են վերջնական հաղթողները՝ կրթօջախները կամ անհատ հեղինակները:

Սույն հայտարարությանը կցվում է մրցույթ-փառատոնի կանոնակարգը և անցկացման ժամանակացույցը՝ արևելահայերեն, արևմտահայերեն, անգլերեն ու ռուսերեն տարբերակներով:

Հավելյալ հարցերով կարելի է դիմել.

Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարություն.
հեռ. +374 10 58-13-91
ֆաքս. +374 10 52-73-43
էլ.փոստ. tamara.zalinyan@edu.am
Կայքէջ. www.edu.am
Էջ Facebook-ում. «Սփյուռքի բաժին ՀՀ կրթգիտնախ»

Գեղագիտության ազգային կենտրոն.
հեռ. +374 99 73-18-26 Եվա Խաչատրյան
էլ.փոստ. nkarchakan@gmail.com
Կայքէջ. www.nca.am
Էջ Facebook-ում. «National Center of Aesthetics»
Կայքէջ. www.nca.am
Էջ Facebook-ում. «National Center of Aesthetics»

ԿԱՆՈՆԱԿԱՐԳ ԵՎ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ[1]
2019թ. Համահայկական մանկապատանեկան նկարչական մրցույթ-փառատոնի անցկացման

«ԻՄ ՍԱՐՅԱՆԸ»
խորագրով

Մրցույթ-փառատոնի թեմա.

Համահայկական մանկապատանեկան նկարչական IX մրցույթ-փառատոնը նվիրվում է XX-րդ դարի մեծագույն նկարիչներից մեկին, հայ նկարչության արդի դպրոցի հիմնադիր Մարտիրոս Սարյանին:

Մրցույթ-փառատոնի մասնակիցներ.

Մրցույթ-փառատոնին կարող են մասնակցել երկու տարիքային խմբեր.

- 6-13
- 14-18:

Մրցույթ-փառատոնի անցկացման կարգ.

Մրցույթն անցկացվելու է երկու փուլով:

Առաջին փուլում աշխատանքները ներկայացվում են էլեկտրոնային տարբերակով՝ մինչև **2019 թ. հունիսի 16-ը**: Մասնագիտական հանձնաժողովի կողմից ընտրվում են լավագույն աշխատանքները՝ ցուցահանդեսի կազմակերպման և պատկերագրքի տպագրման համար:

Երկրորդ փուլում մասնակիցները ներկայացնում են իրենց աշխատանքների բնօրինակները՝ ցուցադրման համար: Ցուցահանդեսին ներկայացված աշխատանքների հեղինակներից կընտրվեն հիմնական և խրախուսական մրցանակակիրներ:

Ստեղծագործությունների գնահատման հիմքերը.

Գնահատման համար հիմք են հանդիսանում հետևյալ չափանիշները.

- բովանդակային պահանջներին համապատասխանություն (*տե՛ս. «Մանկավարժի ուղեցույց» կետը*)
- տեխնիկական պահանջներին հապատասխանություն (տե՛ս. *«Աշխատանքներին ներկայացվող տեխնիկական պահանջները» կետը*),
- ստեղծագործության գաղափարի յուրօրինակություն
- գեղարվեստական կատարման յուրօրինակություն և որաը,

[1] Սույն փաստաթուղթը հասանելի է նաև արևմտահայերենով, ռուսերենով և անգլերենով:

- ուսումնական բաղադրիչի դրսևորում:

ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ. Մ.Սարյանի նկարների արտատպությունները չեն ընդունվելու:

Մանկավարժի ուղեցույց.

Մրցույթ-փառատոնի կազմակերպիչները նախատեսում են երեք բաղադրիչների ներդաշնակ իրականացումը երեխաների հետ մանկավարժի աշխատանքի ընթացքում.

ա/ ուսումնական

բ/ ազգային դաստիարակչական

գ/ գեղագիտական

ա/ Ուսումնական բաղադրիչի մասով մանկավարժից ակնկալվում է.

- սաների համար ճանաչելի դարձնել Մ.Սարյանի ստեղծագործությունները,
- ծանոթացնել սաներին Մ.Սարյանի կենսագրությանը և ստեղծագործության զարգացման փուլերին ու հիմնական թեմաներին,
- պատկերացում տալ երեխաներին Մ.Սարյանի՝ հայ և համաշխարհային նկարչության պատմության մեջ ունեցած դերի և նշանակության մասին:

Բոլոր անհրաժեշտ նյութերին կարելի է ծանոթանալ Մարտիրոս Սարյանի տուն-թանգարանի www.sarian.am կայքէջում, ինչպես նաև օգտագործել Հ.Իգիթյանի անվան Գեղագիտության ազգային կենտրոնի կողմից պատրաստվելիք տեղեկատվական փաթեթից (տես. «*Մեթոդական աջակցություն մանկավարժին*» կետը):

բ/ Դաստիարակության բաղադրիչի մասով մանկավարժից ակնկալվում է.

- հրավիրել երեխաների ուշադրությունը հայրենի բնապատկերներին և շեշտել նկարչի սերը հայրենի հողի նկատմամբ,
- ընդգծել հայ նկարչի ստեղծագործության արժեքը համաշխարհայինի համատեքստում,
- ցույց տալ յուրաքանչյուր անհատի և յուրաքանչյուր մասնագիտության կարևորությունը ազգային պատմության համար:

գ/ Գեղագիտական բաղադրիչի մասով մանկավարժից ակնկալվում է.

- ներկայացնել երեխաներին նկարչի նկարչական ոճը,
- հրավիրել երեխաների ուշադրությունը «սարյանական գույներին»,
- անդրադառնալ նկարների հուզականությանը, ներշնչանքին,
- նպաստել երեխայի՝ Մ.Սարյանի նկարների ընկալման անհատականացմանը:

Ենթադրվում է, որ երեխաների հետ աշխատանքի ծավալը և բնույթը կախված պետք է լինի երեխաների տարիքային առանձնահատկություններից, ինչպես նաև Հայաստանում, Արցախում և սփյուռքում առկա իրական հնարավորություններից: Ուստի՝ յուրաքանչյուր մանկավարժ ինքն է սահմանում իր աշխատանքի ծավալը և բնույթը՝ փորձելով որոշակի չափով անդրադառնալ բոլոր երեք բաղադրիչներին:

Մեթոդական աջակցություն մանկավարժին.

Մրցույթ-փառատոնին մասնակից մանկավարժների համար մինչև **2019թ. մարտ** ամիսը կպատրաստվի Մ.Սարյանի կենսագրությանը և ստեղծագործություններին նվիրված տեղեկատվական փաթեթ, որը կտեղադրվի Գեղագիտության ազգային կենտրոնի պաշտոնական www.nca.am կայքէջում և ՀՀ կրթության և գիտության նախարարության էլեկտրոնային գրադարանի http://lib.armedu.am կայքում:

Նախապատրաստական փուլին աջակցելու և մանկավարժների շրջանում շփումը և փորձի փոխանակումը խրախուսելու համար Facebook սոցիալական կայքում գործելու է միջոցառման վերնագրով՝ «Համահայկական IX մանկապատանեկան նկարչական մրցույթ-փքառատոն», բաց խումբը, որին կարող են անդամակցել մրցույթ-փառատոնին մասնակցելու բոլոր ցանկացողները:

Կազմակերպիչների կողմից նախատեսվում են նաև մեթոդական հանդիպում-սեմինարներ Հայաստանի մարզերում՝ մանկավարժների կողմից նախագծային աշխատանքների ներկայացումը խրախուսելու նպատակով: Հանդիպման տեսագրությունը զետեղվելու է Youtube-ում և Գեղագիտության ազգային կենտրոնի պաշտոնական www.nca.am կայքէջում:

Աշխատանքներին ներկայացվող տեխնիկական պահանջները.

Նկարները պետք է լինեն A2 (420x594մմ) կամ A3 (297x420մմ) չափի:

Նշված չափերին չհամապատասխանող կամ առանց տեղեկության աշխատանքները մերժվելու են:

Աշխատանքները կարող են կատարվել կերպարվեստի ցանկացած ճյուղի միջոցով (գրաֆիկա, գեղանկարչություն, քանդակ, խեցեգործություն, դեկորատիվ կիրառական արվեստ և այլն), ցանկացած նյութով (ջրաներկ, գուաշ, ակրիլ, ածուխ, պաստել, կավ, տեքստիլ, մետաղ, փայտ և այլն):

Աշխատանքները կարող են ուղեկցվել երաժշտությամբ, ասմունքի ձայնագրությամբ, պատմվածքով և հագևոր մշակույթի ոլորտում ինքնադրսևորման այլ ձևերով:

Ցուցահանդես.

Մրցույթ-փառատոնի շրջանակներում առաջին փուլի ավարտից հետո կազմակերպվող ցուցահանդեսում նախատեսվում է նաև լրացուցիչ ձայնա- և տեսաէֆեկտների կիրառումը:

Այս համատեքստում **խրախուսելի է մասնակիցների կողմից Power Point-ով կամ տեսահոլովակներով ներկայացումների պատրաստումը**: Սույն նյութերը կօգտագործվեն ցուցահանդեսի տեխնիկական հարստացման, ինչպես նաև պաշտոնական հյուրերին ցուցահանդեսի բացատրություն (էքսկուրսիա) կազմակերպելու համար:

Power Point-ի ներկայացումը կամ նկարահանված հոլովակը կարող է պատմել մասնակից դպրոցի, սաների, մրցույթ-փառատոնի շրջանակներում նրանց աշխատանքի մասին, կարող է պարունակել երեխաների խոսքը:

Աշխատանքների ներկայացման պայմանները.

Առաջին փուլում աշխատանքների պատկերները JPG ձևաչափով ուղարկվում են Գեղագիտության ազգային կենտրոնի կողմից սպասարկվող **nkarchakan@gmail.com** էլեկտրոնային հասցեին մինչև **2019թ. հունիսի 16-ը ներառյալ**: Պատկերների մեծ քանակի և ծավալի դեպքում ցանկալի է դրանք ուղարկել ոչ թե կցելով նամակին, այլ տեղադրելով որևէ առցանց ալբոմում (օրինակ՝ GoogleDrive, cloud.mail.ru, Picassa, 4shared.com և այլ):

Առաջին փուլում պատկերն ուղարկելիս անհրաժեշտ է պահպանել հետևյալ **պարտադիր** կանոնները.

1. JPG ֆայլերը ունենան նկարի հեղինակի ազգանունը և անունը՝ որպես ֆայլի անվանում,
2. էլեկտրոնային նամակում նշված լինի

   ա/ աշխատանքի անվանումը, ֆիզիկական չափերը և տեխնիկան,

   բ/ հեղինակի անունը, ազգանունը, բնակության երկիրը, քաղաքը, տարիքը և կրթական հաստատությունը (այն դեպքում, եթե նկարը ներկայացվում է ոչ թե անհատի, այլ որևէ կրթօջախի կողմից) և կապի միջոցները՝ էլ. հասցե, հեռախոսահամար,

   գ/ նկարչություն դասավանդող մանկավարժի անունը, ազգանունը և կապի միջոցները՝ էլ. հասցե, հեռախոսահամար:

Նույն տեղեկությունները պետք է լինեն նաև **աշխատանքի բնօրինակի հետևի մասում** (կամ կցված առանձին թերթի վրա)՝ բնօրինակը երկրորդ փուլին ներկայացնելու ժամանակ:

Երկրորդ փուլում ընտրված աշխատանքների բնօրինակները մինչև **սեպտեմբերի 1-ը 2019թ.** փոստով կամ առձեռն պետք է փոխանցվեն Գեղագիտության ազգային կենտրոնին.

National Centre of Aesthetics, Children's art museum, Abovyan 13, Yerevan, 0001, Armenia Yerevan,

0001, Երևան, Աբովյանի 13, Գեղագիտության ազգային կենտրոն, Մանկական ստեղծագործության թանգարան

Ծրարի (ծանրոցի) վրա պետք է լինի «HAMAHAYKAKAN NKARCHAKAN MRTSUYT» նշումը:

Պարգևները՝

Մրցույթ-փառատոնի առաջին փուլի բոլոր հաղթողները ստանալու են ցուցահանդեսի պատկերագիրքը (կատալոգ):

Երկրորդ փուլում հաղթողները ստանալու են ՀՀ ԿԳՆ Գեղագիտության ազգային կենտրոնի դիպլոմներ և պատվոգրեր:

Մրցույթ-փառատոնի ժամանակացույցը.

N	Գործողություն/աշխատանք	Ժամկետ
1.	Մեթոդական աջակցության նպատակով՝ տեղեկատվական փաթեթի տարածում	2019թ. մարտի 1
2.	Առաջին փուլում աշխատանքների ներկայացման վերջնաժամկետ	2019թ. հունիսի 16
3.	Առաջին փուլի արդյունքների ամփոփում	2019թ. հուլիսի 14
4.	Երկրորդ փուլի աշխատանքների բնօրինակների ներկայացման վերջնաժամկետ	2019թ. սեպտեմբերի 1
5.	Մրցութային ցուցահանդեսի կազմակերպում	2019թ. հոկտեմբեր-նոյեմբեր
6.	Արտամրցութային ցուցահանդեսի կազմակերպում	2020թ. հունվար
7.	Հաղթողների հայտարարում, պարգևատրում և փակման արարողություն	2020թ. հունվար-փետրվար

Հավելյալ հարցերով կարելի է դիմել.

Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարություն.
հեռ. +374 10 58-13-91
էլ.փոստ. tamara.zalinyan@edu.am
Կայքէջ. www.edu.am
Էջ Facebook-ում. «Սփյուռքի բաժին ՀՀ կրթգիտնախ»

Գեղագիտության ազգային կենտրոն.
հեռ. +374 99 73-18-26 Եվա Խաչատրյան
էլ.փոստ. nkarchakan@gmail.com
Կայքէջ. www.nca.am
Էջ Facebook-ում. «National Center of Aesthetics»

ԿԱՆՈՆԱԿԱՐԳ ԵՒ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՅՑ[1]
2019թ. Համահայկական մանկապատանեկան նկարչական մրցոյթ-փառատօնի իրականացման

«ԻՄ ՍԱՐԵԱՆՍ»
խորագիրով

Մրցոյթ-փառատօնի առարկայ.

Համահայկական մանկապատանեկան նկարչական 9-րդ մրցոյթ-փառատօնը նուիրուած է 20-րդ դարու մեծագոյն նկարիչներէն մէկուն, հայ նկարչութեան արդի դպրոցի հիմնադիր Մարտիրոս Սարեանին:

Մրցոյթ-փառատօնի մասնակիցներ.

Մրցոյթ-փառատօնին կրնան մասնակցիլ երկու տարիքային խումբեր.

- 6-13
- 14-18:

Մրցոյթ-փառատօնի իրականացման կարգ.

Մրցոյթը կ'իրականացուի երկու փուլով:

Առաջին փուլին աշխատանքները կը ներկայացուին ելեկտրոնային տարբերակով՝ մինչեւ **2019 թ. Յունիս 16-ը**: Մասնագիտական յանձնաժողովի կողմէն կ'ընտրուին լաւագոյն աշխատանքները՝ ցուցահանդէսի կազմակերպման եւ պատկերագիրքի տպագրման համար:

Երկրորդ փուլին մասնակիցները կը ներկայացնեն իրենց աշխատանքներուն բնօրինակները՝ ցուցադրման համար: Ցուցահանդէսին ներկայացուած նկարներուն հեղինակներէն կ'ընտրուին հիմնական եւ խրախուսական մրցանակակիրներ:

Ստեղծագործութիւններու գնահատման հիմքերը.

Գնահատման համար հիմք կը հանդիսանան հետեւեալ չափանիշները.

- բովանդակային պահանջներուն համապատասխանութիւն (*տե՛ս. «Մանկավարժի ուղեցոյց» կէտը*)
- տեխնիկական պահանջներուն հապատասխանութիւն (տե՛ս. *«Աշխատանքներուն ներկայացուող տեխնիկական պահանջները» կէտը*),
- ստեղծագործութեան գաղափարի իւրօրինակութիւնը
- գեղարուեստական կատարման իւրօրինակութիւնն ու որակը,

[1] Սոյն փաստաթուղթը հասանելի է նաեւ արեւելահայերէն, ռուսերէն եւ անգլերէն

- ուսումնական բաղադրիչի դրսեւորումը

ՈՒՇԱԴՐՈՒԹԻՒՆ. Մ.Սարեանի նկարներու արտատպութիւնները պիտի չընդունուին:

Մանկավարժի ուղեցոյց.

Մրցոյթ-փառատօնի կազմակերպիչները կը նախատեսեն՝ երեխաներու հետ մանկավարժի աշխատանքի ընթացքին, ներդաշնակ իրականացնել երեք բաղադրիչներ.

ա/ ուսումնական

բ/ ազգային դաստիարակչական

գ/ գեղագիտական

ա/ Ուսումնական բաղադրիչի համար մանկավարժէն կ'ակնկալուի.

- սաներու համար ճանաչելի դարձնել Մ.Սարեանի ստեղծագործութիւնները,
- ծանօթացնել սաները Մ.Սարեանի կենսագրութեան եւ ստեղծագործութեան զարգացման փուլերուն եւ հիմնական առարկաներուն,
- երեխաներուն պատկերացում տալ Մ.Սարեանի՝ հայ եւ համաշխարհային նկարչութեան պատմութեան մեջ ունեցած դերի եւ նշանակութեան մասին:

Բոլոր անհրաժեշտ նիւթերուն կարելի է ծանօթանալ Մարտիրոս Սարեանի տուն-թանգարանի www.sarian.am կայքէջէն, ինչպէս նաեւ օգտագործել Հ. Իգիթեանի անուան Գեղագիտութեան ազգային կեդրոնի կողմէն պատրաստուելիք տեղեկատուական փաթեթէն (տես. «*Մեթոդական աջակցութիւն մանկավարժին*» կէտը):

բ/ Դաստիարակութեան բաղադրիչի համար մանկավարժէն կ'ակնկալուի.

- երեխաներու ուշադրութիւնը հրաւիրել հայրենի բնապատկերներուն եւ շեշտել նկարիչի սէրը հայրենի հողի նկատմամբ,
- ընդգծել հայ նկարիչի ստեղծագործութեան արժէքը համաշխարհայինի համայնապետկերին մէջ,
- ցոյց տալ իւրաքանչիւր անհատի եւ իւրաքանչիւր մասնագիտութեան կարեւորութիւնը ազգային պատմութեան համար

գ/ Գեղագիտական բաղադրիչի համար մանկավարժէն կ'ակնկալուի.

- երեխաներուն ներկայացնել նկարիչի նկարչական ոճը,
- անոնց ուշադրութիւնը հրաւիրել «սարեանական գոյներուն»,
- անդրադառնալ նկարներուն յուզականութեան եւ ներշնչանքին,
- նպաստել երեխայի՝ Մ.Սարեանի նկարներու ընկալման անհատականացման

Կ'ենթադրուի, որ երեխաներուն հետ աշխատանքի ծաւալն ու բնոյթը կախուած պէտք է ըլլայ երեխաներու տարիքային առանձնայատկութիւններէն, ինչպէս նաեւ Հայաստանի, Արցախի եւ Սփիւռքի մէջ իրական հնարաւորութիւններէն: Ուստի՝ իւրաքանչիւր մանկավարաժ ինք կը սահմանէ իր աշխատանքի ծաւալն ու բնոյթը՝ փորձելով որոշ չափով անդրադառնալ բոլոր երեք բաղադրիչներուն:

Մեթոդական աջակցութիւն մանկավարժին.

Մրցոյթ-փառատօնին մասնակից մանկավարժներուն համար մինչեւ **2019թ. Մարտ** ամիսը կը պատրաստուի Մ.Սարեանի կենսագրութեան եւ ստեղծագործութեան նուիրուած տեղեկատուական փաթեթ, որ կը տեղադրուի Գեղագիտութեան ազգային կեդրոնի պաշտօնական www.nca.am կայքէջին մէջ եւ ՀՀ կրթութեան եւ գիտութեան նախարարութեան ելեկտրոնային գրադարանի http://lib.armedu.am կայքին մէջ:

Նախապատրաստական փուլին աջակցելու եւ մանկավարժներու շրջանանակէն ներս շփումը եւ փորձի փոխանակումը խրախուսելու համար Facebook սոցիալական կայքին մէջ պիտի գործէ նախաձեռնութեան վերնագրով՝ «Համահայկական 9-րդ մանկապատանեկան նկարչական մրցոյթ-փառատօն», բաց խումբ, որուն կրնան անդամակցիլ բոլոր անոնք, որոնք մրցոյթ-փառատօնին մասնակցելու ցանկութիւն ունին:

Կազմակերպիչներու կողմէն կը նախատեսուին նաեւ մեթոդական հանդիպում-սեմինարներ Հայաստանի մարզերուն մէջ՝ մանկավարժներու կողմէն նախագծային աշխատանքներու ներկայացումը խրախուսելու նպատակով: Հանդիպման տեսագրութիւնը պիտի տեղադրուի Youtube-ի եւ Գեղագիտութեան ազգային կեդրոնի պաշտօնական www.nca.am կայքէջին մէջ:

Աշխատանքներուն ներկայացուող տեխնիկական պահանջները.

Նկարները պէտք է ըլլան A2 (420x594մմ) կամ A3 (297x420մմ) չափի:

Նշուած չափերուն չհամապատասխանող կամ առանց տեղեկութեան աշխատանքները պիտի մերժուին:

Աշխատանքները կարելի է կատարել կերպարուեստի որեւէ ճիւղի միջոցով (կրաֆիգ, գեղանկարչութիւն, քանդակ, խեցեգործութիւն, ձեւաւորման կիրառական արուեստ եւ այլն), որեւէ նիւթով (ջրաներկ, գուաշ, ագրիլ, ածուխ, պաստել, կաւ, տեքստիլ, մետաղ, փայտ եւ այլն):

Աշխատանքներուն կարելի է կցել երաժշտութիւն, ասմունքի ձայնագրութիւն, պատմուածք եւ հոգեւոր մշակոյթի ոլորտի ինքնադրսեւորման այլ ձեւեր:

Ցուցահանդէս.

Մրցոյթ-փառատօնի ծիրէն ներս առաջին փուլի աւարտէն ետք կազմակերպուող ցուցահանդէսին կը նախատեսուի նաեւ լրացուցիչ ձայնատեսային ազդեցիկ միջոցներու կիրառումը:

Այս առումով **խրախուսելի է մասնակիցներու կողմէն Power Point-ով կամ տեսահոլովակներով ներկայացումներու պատրաստումը**: Սոյն նիւթերը պիտի օգտագործուին ցուցահանդէսի տեխնիկական հարստացման, ինչպէս նաեւ պաշտօնական հիւրերուն ցուցահանդէսի բացատրութիւն (շրջայց) կազմակերպելու համար:

Power Point-ի ներկայացումը կամ նկարահանուած հոլովակը կրնայ պատմել մասնակից դպրոցի, սաներու, անոնց աշխատանքի մասին, կրնայ պարունակել երեխաներու խօսքը:

Աշխատանքներու ներկայացման պայմանները.

Առաջին փուլին աշխատանքներու պատկերները JPG ձեւաչափով կ'ուղարկուին Գեղագիտութեան ազգային կեդրոնի կողմէն սպասարկուող **nkarchakan@gmail.com** ելեկտրոնային հասցէին մինչեւ **2019թ. Յունիս 16-ը ներառեալ**: Պատկերներու մեծ քանակի եւ ծաւալի պարագային ցանկալի է զանոնք ուղարկել ոչ թէ կցելով նամակին, այլ տեղադրելով որեւէ առցանց ալպոմի մէջ (օրինակ՝ GoogleDrive, cloud.mail.ru, Picassa, 4shared.com եւ այլ):

Առաջին փուլին պատկերը ուղարկելու ժամանակ անհրաժեշտ է պահպանել հետեւեալ **պարտադիր** կանոնները.

1. JPG ֆայլերը ունենան նկարի հեղինակի մականունը եւ անունը՝ իբրեւ ֆայլի անուանում,
2. ելեկտրոնային նամակին մէջ նշուած ըլլայ աշխատանքի անուանումը, չափերը եւ տեխնիկան,
3. հեղինակի անուն, մականունը, բնակութեան երկիրը, քաղաքը, տարիքը եւ կրթական հաստատութիւնը (այն պարագային, եթէ նկարը կը ներկայացուի ոչ թէ անհատի, այլ որեւէ կրթօջախի կողմէն) եւ կապի միջոցները՝ ել. հասցէ, հեռաձայնի թիւը,
4. նկարչութիւն դասաւանդող մանկավարժի անուն, մականունը եւ կապի միջոցները՝ ել. հասցէ, հեռաձայնի թիւ:

Նոյն տեղեկութիւնները պէտք է ըլլան նաեւ **աշխատանքի բնօրինակի ետեւի մասին**՝ բնօրինակը երկրորդ փուլին ներկայացնելու ժամանակ:

Երկրորդ փուլին ընտրուած աշխատանքներուն բնօրինակները մինչեւ **Սեպտեմբեր 1 2019թ.** փոստով կամ առձեռն պէտք է փոխանցուին Գեղագիտութեան ազգային կեդրոնին.

National Centre of Aesthetics, Children's art museum, Abovyan 13, Yerevan, 0001, Armenia Yerevan,

0001, Երեւան, Աբովեանի 13, Գեղագիտութեան ազգային կեդրոն, Մանկական ստեղծագործութեան թանգարան

Ծրարի վրայ պէտք է ըլլայ **«HAMAHAYKAKAN NKARCHAKAN MRTSUYT»** նշումը:

Պարգեւները՝

Մրցոյթ-փառատօնի առաջին փուլի բոլոր յաղթողները պիտի ստանան ցուցահանդէսի պատկերագիրքը:

Երկրորդ փուլին յաղթողները պիտի ստանան ՀՀ ԿԳՆ Գեղագիտութեան ազգային կեդրոնի վկայականներ եւ պատուոյ գիրեր:

Մրցոյթ-փառատօնի ժամանակացոյցը.

N	Գործողութիւն/աշխատանք	Ժամկէտ
1.	Մեթոտական աջակցութեան նպատակով՝ տեղեկատուական փաթեթի տարածում	2019թ. Մարտ 1
2.	Առաջին փուլին աշխատանքներու ներկայացման վերջնաժամկէտ	2019թ. Յունիս 16
3.	Առաջին փուլի արդիւնքներու ամփոփում	2019թ. Յուլիս 14
4.	Երկրորդ փուլի աշխատանքներու բնօրինակներու ներկայացման վերջնաժամկէտ	2019թ. Սեպտեմբեր 1
5.	Մրցութային ցուցահանդէսի կազմակերպում	2019թ. Հոկտեմբեր-Նոյեմբեր
6.	Արտամրցութային ցուցահանդէսի կազմակերպում	2020թ. Յունուար
7.	Յաղթողներու յայտարարում, պարգեւատրում եւ փակման արարողութիւն	2020թ. Յունուար-Փետրուար

Յաւելեալ հարցերով կարելի է դիմել.

Հայաստանի Հանրապետութեան կրթութեան եւ գիտութեան նախարարութիւն.
հեռ. +374 10 58-13-91
էլ.փոստ. tamara.zalinyan@edu.am
Կայքէջ. www.edu.am
Էջ Facebook-ում. «Սփիւռքի բաժին ՀՀ կրթգիտնախ»

Գեղագիտութեան ազգային կեդրոն.
հեռ. +374 99 73-18-26 Եւա Խաչատրեան
էլ.փոստ. nkarchakan@gmail.com
Կայքէջ. www.nca.am
Էջ Facebook-ում. «National Center of Aesthetics»

REGULATIONS AND SCHEDULE[1]
of the <<My Sarian>> Pan-Armenian Children's and Youth's Paintings Competition-Festival

Theme of the Competition-Festival

The Pan-Armenian Children's and Yourth's Paintings IX Competition-Festival is dedicated to one of the most renowned artists of the XX century and the founder of a modern Armenian national school of painting, Martiros Sarian.

Participants of the Competition-Festival

The Competition-Festival is open to two age profiles:

- 6-13
- 14-18:

Rules of the Competition-Festival

The Competition is carried out through two stages.

In the first stage, photos of art that are to be presented must be submitted via e-mail by **June16, 2019**. The works will be short-listed to semi-finalists by the Expert Group. All selected works are supposed to be exposed at the exhibition and later be published in exhibition catalogue.

In the second stage, the original selected works must be provided for the exhibition. Finalists will be selected among the authors of the exposed pieces of art. The winners will be goven awards and some other participants will be given encouragement.

Main Evaluation Criteria

The evaluation of participants' works of art is assessed on the basis of the following criteria:

- compliance with the content requirements
  (see <The content requirements to a piece of art> item)
- compliance with the technical requirements
  (see <The technical requirement to a piece of art> item)
- original meaning of a piece of art
- originality and quality of the artistic performance
- evidence of educational components

ATTANTION! Copies of M.Sarian's paintings will not be considered by the Expert Group.

Content requirements for a Piece of Art

In working with children and yourth teachers are expected to acknowledge three educational components:

[1] The document is available also in Russian, Western and Eastern Armenian

a/ informational
b/ ethical
c/ aesthetic

a/ As a result of instructions, children (yourth) are expected to

- recognize the paintings by M.Sarian,
- know M.Sarian's life, main stages of his creative development and themes of his paintings,
- realize the importance and the role of M.Sarian in the Armenian and World Art History.

Most of necessary materials are available on the M.Sarian House Museum's official website (www.sarian.am). Additionally, an informational package (Teachers Informational Package) will be prepared by the National Center of Aesthetic *(see <Some Criteria to Help Teachers> item).*

b/ In a process of ethical education, teachers are expected to

- draw children's attention to the landscapes and to underline the artist's love towards the homeland,
- emphases the value of Armenian artist in a context of World Art,
- show the importance of each person and value of any profession in Armenian History.

c/ In a process of aesthetic education, teachers are expected to

- present the artistic style M.Sarian worked in,
- draw children's attention to so called <Sarian's colors>,
- demonstrate emotionality and inspiration of paintings belonging to M.Sarian
- foster a process of individualization in perception of the artist's paintings.

It is assumed that teachers may make differences in nature and in extent of educational processes according to age differences and differences in real possibilities available in Armenia, Artsakh and different parts of Diaspora. In other words, any teacher is free to decide the nature and extent of his/her work concerning the intention on the three components.

Some Criteria to Help Teachers

The Teachers Informational Package providing information on M.Sarian's life and activities will be prepared and posted on the www.nca.am website of The National Centre of Aesthetics and the http://lib.armedu.am e-library of the Ministry of Education and Science by **March, 2019.**

To help teachers during the preparatory stage and to facilitate communication and experience exchange the Facebook open group named «Համահայկական IX մանկապատանեկան նկարչական մրցույթ-փառատոն» will operate from the beginning of the event.

To promote creative projects among participants, the organizers also plan methodological meetings-seminars in Armenian marzes. Videos of the seminars will be posted on YouTube and the www.nca.am website of The National Centre of Aesthetics.

Technical Requirements for a Piece of Art

The required size of paintings is A2 (420x594 mm) or A3 (297x420 mm).

The paintings which do not meet current requirements will not be considered.

The works are allowed to be expressed in any style of art (graphics, painting, sculpture, ceramics, crafts etc.) and with any material (gouache, pastel, color pencils, watercolor, coal, textile, metal, wood, clay etc.).

The works can be supplemented with music, poetry, story, or some other form of self-expression.

The Exhibition

The exhibition, which will be organized after the first stage of competition, is expected to be accompanied with additional video- and audio effects.

In this context, we encourage the use of Power Point or video presentations from the participants. The mentioned materials will be used. for technical enrichment of the exhibition, and also to compile a guide tour for official guest.

The Power Point or video presentations may provide information about participating schools, students, their work processes. Children are welcomed to speak about themselves.

Modalities of Providing Competitive Works of Art

In the first stage, the works should be presented in JPG format via e-mail **nkarchakan@gmail.com** by **June 16, 2019**. In case of large-sized files, it is preferable to send them through online albums such as GoogleDrive, cloud.mail.ru, Picassa, 4shared.com etc.

In the first stage, the following rules must be observed:

1. JPG filename must indicate the name and surname of the author,
2. e-mail must contain
    a. title of the work, its sizes and artistic techniques
    b. author's name, surname, resident country, city, age, school and personal contacts (e-mail, phone number),
    c. teacher's name, surname, personal contacts (e-mail, phone number).

The same information must be on the back of the original paintings (or be attached to works).

In the second stage all original works must be sent by **September 1, 2019** via regular mail or brought to:

National Centre of Aesthetics, Children's art museum, Abovyan 13, Yerevan, 0001, Armenia Yerevan,

0001, Երևան, Աբովյանի 13, Գեղագիտության ազգային կենտրոն, Մանկական ստեղծագործության թանգարան

Envelopes (packages) must be addressed to «**HAMAHAYKAKAN NKARCHAKAN MRTSUYT**».

Awards

All semi-finalists participating in the exhibition will be presented with exhibition catalogue. The finalists will receive winning diplomas or certificates of appreciation issued by the National Centre of Aesthetics.

The schedule of the Competition-Festival:

N	Work/Action	Deadline
1.	Providing of Teachers Informational package	March 1, 2019
2.	Final day of submission of works' photos in the first stage	June 16, 2019
3.	Evaluation of the results of the first stage	July 14, 2019
4.	Presentation of the original works in the second stage	September 1, 2019
5.	Opening of competitive exhibition	October-November, 2019
6.	Opening of non-competitive exhibition	January, 2020
7.	Announcing and awarding the winners during event closing ceremony	January-February, 2020

To get additional information, please contact:

The Ministry of Education and Science of Republic of Armenia
Tel.: +374 10 58-13-91
E-mail: tamara.zalinyan@edu.am
Web-site: www.edu.am
Facebook: «Սփյուռքի բաժին ՀՀ կրթգիտնախ»

The National Center of Aesthetics
Tel.: +374 99 73-18-26 Yeva Khachatryan
E-mail: nkarchakan@gmail.com
Web-site: www.nca.am
Facebook: « National Center of Aesthetics»

ПОЛОЖЕНИЕ И ГРАФИК ПРОВЕДЕНИЯ[1]
общеармянского фестиваля-конкурса детского и юношеского рисунка 2019г.

«МОЙ САРЬЯН»

Тема фестиваля-конкурса

IX Общеармянский фестиваль-конкурс детского и юношеского рисунка посвящается одному из крупнейших художников XX века, основоположнику современной армянской школы живописи Мартиросу Сарьяну.

Участники фестиваля-конкурса

В фестивале-конкурсе могут принять участие представители двух возрастных групп:

- 6-13 лет,
- 14-18 лет.

Порядок проведения фестиваля-конкурса

Конкурс проводится в два тура.

В первом туре участники должны будут переслать фотографии своих работ по электронной почте. Экспертной комиссией будут отобраны лучшие работы для организации конкурсной выставки и дальнейшего опубликования каталога выставки.

Во втором туре участники должны будут переслать оригиналы своих работ для организации выставки. Из авторов выставочных работ будут отобраны победители в основных и поощрительных номинациях.

Основные критерии оценивания работ

Оценивание работ осуществляется по следующим основным критериям:

- соответствие содержательным требованиям *(см. пункт «Содержательные требования к работам»)*,
- соответствие техническим требованиям *(см. пункт «Технические требования к работам»)*,
- идейное своеобразие работы,
- своеобразие и качество художественного исполнения,
- выражение содержательного компонента.

ВНИМАНИЕ: Копии картин М.Сарьяна рассматриваться не будут.

---

[1] Данный документ доступен также на армянском и англиском азыках

Содержательные требования к работам

Организаторы фестиваля-конкурса полагают, что основная задача педагога должно состоять в том, чтобы направить работу детей гармонично по трем содержательным компонентам:

а/ обучающему,

б/ воспитательно-нравственному,

в/ воспитательно-эстетическому.

а/ Обучающий компоненнт предполагает, что учащиеся должны

- уметь узнавать картины М.Сарьяна,
- быть знакомы с жизнью, основными темами и этапами творчества М.Сарьяна,
- иметь представление о роли и значении творчества М.Сарьяна в истории армянской и мировой живописи.

Все необходимые для обучения материалы имеются на сайте дома-музея Мартироса Сарьяна www.sarian.am. Можно будет воспользоваться также информационным пакетом, который подготовит Национальный эстетический центр им.Г.Игитяна (см. пункт *«Методическая помощь педагогу»*).

б/ Воспитательно-нравственный компонент предполагает, что педагог должен

- обратить внимание детей на пейзажи и подчеркнуть любовь художника к родной земле,
- подчеркнуть значение творчества армянского художника в истории мирового искусства,
- показать, что каждая отдельная личность и каждая профессия ценны в контексте национальной истории.

в/ Воспитательно-эстетический компонент предполагает, что педагог должен

- способствовать освоению художественного стиля художника,
- обратить внимание детей на «сарьяновские цвета»,
- подчеркнуть эмоциональность и вдохновленность картин,
- способствовать индивидуализации художественного восприятия картин М.Сарьяна.

Объем и характер работы с детьми может варьироваться в зависимости от возрастных категорий, а также от наличия реального ресурса для обучения в Армении, Арцахе и диаспоре. Иначе говоря, каждый преподаватель сам определяет объем и характер работы, стараясь, по возможности, обратиться ко всем трем компонентам.

Методическая помощь педагогу:

В помощь преподавателям – участникам фестиваля-конкурса – до марта 2019г. будет подготовлен информационный пакет о жизни и творчестве М.Сарьяна, который будет выложен на официальном сайте Национального эстетического центра www.nca.am и на сайте электронной библиотеки Министерства образования и науки РА http://lib.armedu.am.

В целях обмена опытом и укрепления связей среди преподавателей на подготовительном этапе, в социальной сети Facebook будет действовать открытая группа под названием «IX Общеармянский фестиваль-конкурс детского и юношеского рисунка», членом которой могут стать все преподаватели, желающие участвовать в фестивале-конкурсе.

Организаторы предполагают также организацию встреч-семинаров в различных марзах Армении. Видеозаписи семинаров будут выложены в YouTube-е и на официальном сайте Национального эстетического центра www.nca.am.

Технические требования к работам:

Работы могут быть представлены всеми видами изобразительного искусства (графика, живопись, скульптура, керамика, декоративно-прикладное искусство и т.д.) и выполнены с использованием любых материалов (акварель, гуашь, акрил, уголь, пастель, глина, текстиль, металл, дерево и т.д.).

Рисунки должны быть выполнены в формате А2 (420х594мм) или А3 (297х420мм). **В случае несоответствия указанным размерам рисунки рассматриваться не будут.**

При желании работы могут сопровождаться музыкой, декламацией, рассказом и другими формами творческого самовыражения.

Выставка:

В процессе экспозиции работ, отобранных по результатам первого тура, предполагается использование дополнительных аудио- и видеоэффектов.

В этой связи **поощряются видеоролики и презентации в Power Point, подготовленные участниками.** Эти материалы будут использованы для технического оснащения экспозиции, а также при проведении экскурсии для официальных гостей в день церемонии открытия выставки.

Презентации и видеоролики могут представлять школу-участницу, учащихся, процесс их работы в рамках фестиваля-конкурса. В них могут содержаться краткие речи детей.

Условия представления работ:

В первом туре работы пересылаются в формате JPG по адресу Национального эстетического центра nkarchakan@gmail.com до **16-го июня 2019г. включительно.** В случае большого количества работ и объема файлов желательно, чтобы фотографии были пересланы не прикрепленным файлом, а с помощью виртуального альбома (например, GoogleDrive, cloud.mail.ru, Picassa, 4shared.com и т.д.).

При представлении работы в первом туре необходимо следовать следующим **обязательным** правилам:

1. в название JPG файла должны быть выведены имя и фамилия автора работы,
2. в электронном письме должны быть указаны:

а/ название работы, ее физические размеры и техника,

б/ имя, фамилия автора, страна и город проживания, возраст и образовательное учреждение (в том случае, если работа представлена самостоятельно индивидом) и средства связи – адрес эл. почты, номер телефона,

в/ имя и фамилия преподавателя и индивидуальные средства связи – адрес эл. почты, номер телефона.

Та же информация должна быть на оборотной стороне (или приложена на отдельном листе) оригинала при представлении его на второй тур конкурса.

Отобранные на второй тур работы должны быть доставлены по почте или переданы лично **до 1-ого сентября 2019г.** по адресу Национального эстетического центра:

National Centre of Aesthetics, Children's art museum, Abovyan 13, Yerevan, 0001, Armenia Yerevan

0001, Ереван, ул.Абовяна 13, Национальный эстетический центр, Музей детского творчества

На конверте или посылке должно быть указано **«HAMAHAYKAKAN NKARCHAKAN MRTSUYT»**

Награды

Все победители первого тура конкурса получат выставочный каталог.
Победители второго тура получат дипломы и почетные грамоты.

График проведения фестиваля-конкурса:

N	Действие	Срок
1.	Рассылка информационного пакета о М.Сарьяне	1-ое марта 2019г.
2.	Представление работ на первый тур	16-ое июня 2019г.
3.	Обобщение результатов первого тура	14-ое июля 2019г.
4.	Представление оригиналов работ на второй тур	1-ое сентября 2019г.
5.	Открытие конкурсной выставки	октябрь-ноябрь 2019г.
6.	Открытие внеконкурской выставки	январь 2020г.
7.	Объявление и награждение победителей, церемония закрытия	январь-февраль 2020г.

По дополнительным вопросам обращаться:

Министерство образования и науки Республики Армения
тел.: +374 10 58-13-91
Эл.почта: tamara.zalinyan@edu.am
Сайт: www.edu.am
В Facebook-е: «Սփյուռքի բաժին ՀՀ Կրթգիտնախ»

Национальный эстетический центр
тел.: +374 99 73-18-26 Ева Хачатрян
Эл.почта: nkarchakan@gmail.com
Сайт: www.nca.am
В Facebook-е: «National Center of Aesthetics»